ՄՈՒՐԱՑԱՆԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարանի արխիվային ֆոնդերում պահվում են հայ նշանավոր վիպասան Մուրացան (Գրիգոր Տեր-Հովհաննիսյան, 1854—1908) հինգ անտիպ նամակները՝ ուղղված Կյուրեղ Սրապյանին, Կարապետ Կոստանյանին և Գարեգին Հովսեփյանին, ինչպես նաև Մկրտիչ կաթողիկոսին (Խրիմյան Հայրիկ) հասցեագրած դիմումը, որոնք գրված են 1892—1906 թթ.։

Այդ նամակներից երկուսը ուշագրավ են նրանով, որ վերաբերում են հայ հասարակական և կրթական կյանքի առանձին հարցերին։ 1892 թ. ապրիլին Մուրացանը մի նամակով դիմել է Բարվի հոգևոր գործիչ Կյուրեղ Սրապյանին՝ խնդրելով նրան օգնելու «Նոր-Դար» թերթի խմբագիր Սպանդար Սպանդարյանին՝ նյութական սուղ պայմանների հետևանքով փակման վտանգի առաջ կանգնած թերթի համար միջոցներ հայթայթելու գործում։ 1899 թ. սեպտեմբերի 20-ին գրած նամակով Մուրացանը հայ մշակույթի շատ գործիչների նման ողջունում է Էջմիածնի Գևորգյան Ճեմարանի հիմնադրման 25-ամյակը և 150 կտոր գիրք է նվիրում Ճեմարանին։

Նամակներից երկուսը զգալի արժեք ունեն Մուրացանի գրական ստեղծագործական կենսագրության համար։ Մուրացանը այն ականավոր արձակագիրներից էր, որը դիմեց պատմական թեմատիկային և ստեղծագործեց պատմական նշանավոր երկեր։ Նա ուսումնասիրել է հայ ժողովրդի անցյալը և պատմական հուշարձանները, շատ պատկերավոր կերպով անդրադարձնելով դրանք իր ստեղծագործության մեջ։ 1904 թ. օգոստոսի 6-ին գրած մի նամակում նա խոսում է դեպի պատմական հուշարձաններով հարուստ վայրերը կատարած իր այցելություններից մեկի մասին։ Մյուս նամակում Մուրացանը ակնարկում է ցարական գրաքննության մասին։ Ինչպես հայտնի է, 1905 թ. ռևոլյուցիայի ժամանակ գրաքննությունը Ռուսաստանում շատ խստացվեց։ Յուրաքանչյուր գրական ստեղծագործության վրա կասկածանքով էին նայում և հրատարակությունը արգելում կամ ձգձգում որոշ ժամանակ։ Այդ բախտին է արժանացել նաև Մուրացանի երկերից մեկը։

Անցյալում հայ գրողի նյութական ծանր վիճակը պատկերացնելու տեսակետից ուշագրավ են Մուրացանի 1904 թ. հոկտեմբերի 29-ին գրած նամակը և կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին ուղղած՝ 29 նոյեմբերի 1906 թվակիր դիմումը։

Հուսով ենք, որ սույն վավերագրերի հրապարակումը կնպաստի ականավոր գրողի կյանքի և գրական գործունեության որոշ հարցերի լուսաբանությանը։

Ա. Հ. ԱԴԱՄՅԱՆ

Արժանապատիվ հայր սուրբ
Կյուրեղ վարդապետ Սրապյան
ի Բագու

Ձեզ հետ ծանոթանալուս ի վեր տարի չեմ ունեցած Ձեր արժանապատվության հետ գրագրություն անելու, սակայն հույս ունեմ, որ ինձ մոռացած չեք. հատկապես և ներկա գրության ուշադրություն առնուլ պիտի հաճեք։

Պ. Սպանդարյանը առաջները Բագու եկած լինելով, խոսել էր այդտեղ մի ռանի անձանց, ընդ որս և Ձեր արժանապատվության հետ՝ «Նոր-Դար»-ի անապահով գրության մասին և նրան խոստացել էին այդտեղ աշխատել՝ թերթը

ապահովելու համար և աշխատության արդյունքի մասին հարկ եղածը տեղեկացրել իրեն, Պ. Դոլուխանյանը, որ խոստացել էր գործին գլուխ անցնել, մինչև անգամ պ. Սպանդարյանի նորեն Բագու գալը ավելորդ էր համարած, ասելով որ ամեն ինչ ինքը կկարգադրե։ Բայց ահա բավական ժամանակ անցավ և պ. Սպանդարյանը ոչ Ձեր արժանապատվությունից և ոչ պ. Դոլուխանյանից ոչ մի տեղեկություն չառավ, խոստացված աշխատության գործադրության և նրա արդյունքի մասին։

Եվ որովհետև գնալով լրագրի դրությունը ծանրանում է, հին բաժանորդները ապառիկները չեն ղրկում, իսկ նոր բաժանորդներից ստացվածները հետըզհետե ընթացիկ պարտքերին վճարելով հին պարտուց բեռը մնում է անշարժ և թերթը ամրան ամիսներում դադարելու վտանգին է մոտենում։

Այսպիսի հանգամանքներում այլևս անհնար լինելով սպասելն, պ. Սպանդարյանը վաղը արդեն ճանապարհվում է Բագու, այդ գործը գլուխ բերելու համար յուր բարեկամների օգնությանը դիմելու։ Իսկապես մեծ է նրա հույսը Ձեր արժանապատվության վրա և մենք բոլորս էլ հավատացած ենք, որ Ձեր ազդեցիկ միջամտությունը հաջողության գրավական կարող է լինել այդ գործի համար, եթե «Նոր-Դար»-ի բարեկամները այս անգամ ևս սպասված եռանդով չեն վերաբերվիլ նրա ապահովության գործին, այն ժամանակ արդեն «Նոր-Դար»-ի հարատևության հույսը կորած պետք է համարել։ Նա անպատճառ կդադարի և այս ամենամեծ կորուստը կլինի մեզ համար, որովհետև նույն հոգվով և ուղղությամբ թերթ էլ ոչ կհրատարակվի և ոչ իսկ հրատարակելու իրավունք կտան մեզ։

Քաղցր է ինձ հուսալ որ այս անգամ պ. Սպանդարյանի գալուստը նախորդ գալստյան բաղդը չի ունենար և որ Ձեր արժանապատվությունը հարկ եղած աշխատությունը գործ կդնի արժանավորագույն գործերից մինի՝ «Նոր-Դար»-ի ապահովության գործի հաջողության նպաստելու[1]։

Ձեր բարձր արժանապատվության
ամենախոնարհ ծառա
Մուրացան

8 ապրիլի, 1892, Թիֆլիս

Առ բարձրապատիվ տեսուչն Ս. Էջմիածնի գերագույն ժառանգավորաց ճեմարանի
արժանապատիվ հայր

Երջանկահիշատակ Գևորգ Դ կաթողիկոսի հավետ աղգօգուտ հիմնարկությունը՝ ժառանգավորաց ճեմարանը իրավամբ է տոնում այսօր յուր գոյության քսանհինգամյա տարեդարձը, վասնզի այդ քառորդ դարում նա ապրել է արդյունավոր կերպիվ և չնայելով որ հաճախ շրջապատված է եղել անհամբույր հանգամանքներով, այսուամենայնիվ, նա տվել է ազգին բարի պտուղներ։

25 տարին, ընդհանրապես, մեծ ժամանակ չէ, բայց հայ ժողովրդի մեջ հիմնված և նրա համար ապրող մի հաստատության համար՝ կարի երկար շըր-

1 Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Անհատական արխիվների ֆոնդ. թղթ. № 82, վավ. № 902։

ջան համարելու է։ Երբ երջանկահիշատակ կաթողիկոսի ձեռակերտն հպիվ ուրեմն ավարտյալ հրո ճարակ դարձավ (ես հիշում եմ տխրությամբ), մի համալսարանական հայ վարդապետ, որ հետո եպիսկոպոսեցավ, այդ լուրն առնելուն պես, ուրախության տոն կատարեց գավառական քաղաքներից մինում և այդ տոնին հրավիրեց յուր սրտակից բարեկամները։ Երբ ես վրդովյալ հարցուցի թե՝ «ինչո՞ւ հայ վարդապետը այդօրինակ չարախնդություն է արտահայտում մեր կրթական գործին հասած ծանր հարվածի նկատմամբ», նա պատասխանեց.— «էջմիածինը պիտի քանդվի, որովհետև այդտեղից օգուտ չէ գալու մեզ»։ Եվ նա այդ ասում էր այն պատճառով, որ ինքն այդ միջոցին հրաժարեցրված էր պաշտոնից...։

Այս տխուր դեպքը ես հիշում եմ նրա համար, որ ապացուցանեմ թե՝ արդարև, Գևորգյան ճեմարանի 25 տարի գոյություն ունենալը և շահավոր կերպով գործելը այնպիսի մի ժողովրդի մեջ, որ ծնում և սնուցանում է հիշածս վարդապետի նման անձինք, մի նշանավոր երևույթ է և անձնվեր գործունեության կատարյալ հաղթանակ։

Թող ապրի, ուրեմն, այն հույսը, որ Գևորգյան ճեմարանի հիմունքը հաստատեց, թող աճի այն սերը, որ այդ տաճարի պաշտոնյաների սրտում անձնվիրության զգացումը վառեց, որով և նրա քսանհինգամյա գոյությունը արգյունավոր դարձույց և թող մեզ ամենիս ողևորև այն հավատը թե՝ Գևորգյան ճեմարանը՝ իբրև անշիջանելի ջահ՝ պիտի վառի շարունակ լուսավորչաշեն Տաճարի հովանվույն ներքո և լուսավորև հայ ժողովուրդն հոգվո և մտաց անկապտելի լուսով։ Եվ բարձրելույն Աջը, որ միակ զորավիգն է մեզ այսօր, թող հաստատ և անխախտ պահև լուսո այդ Տաճարը և փրկև նրան այնպիսի փորձանքներից, որոնց դեմ անկարող ենք մենք կռվել...։

Մատչելով ի համբույր Սուրբ Աջո Վեհափառ հովանավորողի Ուսման Տաճարից, ես ևս հայր Տեսուչ, իբրև անդամ հայ ժողովրդյան, շտապում եմ հայտնել իմ սրտագիր ուրախությունն ու շնորհավորանքն հարգարժան վարչության Գևորգյան ճեմարանիդ և հայտարարել թե ցանկանալով գեթ մի բանով օգտավետ լինել վերջնույս, ուղարկում եմ իմ կողմից ճեմարանի գրադարանին նվեր հարյուր հիսուն հատորի չափ գիրք, որոց ցուցակը ընդնմին և գրքերը փոխադրող ընկերության ընկալագիրը ներփակում եմ նամակիս մեջ։

Թեպետ ուղարկածս նվերը արժեք չունի, բայց և այնպես նա կարող է մասամբ ծառայել ճեմարանի գրադարանի ամբողջացմանը։ Ուստի խնդրում եմ ընդունել այն իբրև զլուսա այրվույն և վեստեղել գրադարանում ի հիշատակ ճեմարանի քսանհինգամյա տարեդարձի[1]։

Ամենախորին հարգանոք՝
Մուրացան

20 սեպտեմբերի 1899 ամի,
Թիֆլիս

Բարձրապատիվ հայր Գարեգին վարդապետ ի Գանձասար

Հուլիս 11 թվով Ձեր պատվական նամակն, որ Աղդամից փոստ էր ձգված նույն ամսո 20-ին, ստացա տեղս 21-ին։

[1] Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Անհատական արխիվների ֆոնդ, թղթ. № 185, վավ. № 35։

Շատ ուրախ եմ որ Դուք արդեն վայելում եք Գանձասարու մաքուր օդը, ջուրը և հիանում նրա հրաշալի տեսարաններով, որոնք երբեմն այնքան շատ սիրելի էին ինձ և այսօր էլ կարի տենչալի, բայց ցավելով ցավում եմ, որ չի պիտի կարողանամ խոստումս կատարել։ Այսօր արդեն օգոստոսի 6-ն է և ես դեռ այրվում եմ Թիֆլիսում, էլ ե՞րբ կարող եմ գալ Շուշի որ Ձեր ավհալին էլ հասնեմ։

Պարոն Թումանյանին էլ չեմ պատահում, կարծեմ նա Շուլավերում է։ Համենայն դեպս եթե կարողացա ելնել տեղիցս ամսույս 10-ին, հետս կվերցրնեմ էստամբի թուղթ, գուցե հաջողիմ հասնել Ձեզ։

Տիրայր և Կոմիտաս հայր սուրբերի հետ մի քանի օրով գնացինք Սանահին— շատ գոհ էի այդ ուխտագնացությամբս։ Կանայանն էլ այնտեղ էր էստամբաժով արձանագրություն էր հանում։ Սանահնի ինձ վրա թողած տպավորությունն էլ շատ մեծ էր, մանավանդ նրա շրջականերինը, բայց Գանձասարին չի հասնիլ նաև յուր հորիզոնի շքեղությամբ։

Սիրալիր ողջույն Արժ. Անտոն վարդապետին, շնորհակալություն իմ կենացը խմելու համար։ Պիտի աշխատեմ գալ Գանձասար և նրա պատմական կալի վրա խմել երկուսիդ կենացները։ Տեսնենք ասուած ինչպես է հաջողում։

Շատ զբաղված եմ գործերով. ներողություն եմ խնդրում ուշ պատասխանելուս և շտապ-շտապ ու խառն գրելուս համար[1]։

Ընդունեցեք իմ ջերմագին ողջույններն, որով մնում եմ միշտ

Ձեզ անձնվեր և խոնարհ ծառա

Մուրացան

6 օգոստ., 1904, Թիֆլիս

Բարձրապատիվ հայր
Գարեգին վարդապետ
Երևան

Վաղուց է Ձեզանից տեղեկություն չունեմ, բայց հուսամ ողջ առողջ եք և բազմամեղիս համար աղոթարար։

Ձեզ ղրկածս 50 օրինակ գրքերի վիճակը չիմացա ինչպես տնօրինեցիք։ Ձեր 17 բաժանորդներից 3-ին ինքս եմ գրքերը ղրկել, այն է՝ օր. Զարուհուն, Հուսիկ վարդապետին և Անտոն վարդապետին։ Մնացյալից էլ թե որքան եք Դուք տեղավորել և որքան է մնում, կցանկանայի իմանալ, նույնպես թե՝ որոնցի՞ց եք լրիվ ստացել բաժնեղները և որո՞ց վրա կա ապառիկ։ Այդ հաշիվը Դուք հեշտությամբ կարող եք պարզել, ըստ որում Ձեզ մոտ են գտնվում անդորրագրերի արմատները։ Թեպետ մի ցուցակ ստացած եմ Ձեզանից, բայց կուզենայի մի լրացուցիչ ցուցակ էլ ունենալ, գուցե նոր բաժանորդներ էլ ունեք, որոնք չեն մտած հին ցուցակը։

Արժ. Վահան Ավագ քահանա Վաչիյանցը Երևանից գրած և խնդրած էր ինձ ուղարկել իրեն նվեր իմ երկասիրություններից մի օրինակ, առարկելով թե՝ յուր տանն ունի փոքրիկ գրադարան, որից օգտվում են այն աշակերտներն ու աշակերտուհիներն, որոնք հասարակաց ընթերցարան հաճախել չեն

[1] Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Անհատական արխիվների ֆոնդ, թղթ. № 185, վավ. № 13։

պարոդանում, իսկ ինքը միջոց չունի ամեն գիրք փողով առնելու։ Եթե ճիշտ է, խնդրեմ հաճեք ուղարկել նրան մի օրինակ, ես հիշյալ քահանային ճանաչելու պատիվ չունեմ, բայց թե նա իրոք միջնորդ է հանդիսանում հայ ընթերցանություն տարածելու, մեր պարտքն է օգնել նրան։

Ուրիշ կարևոր հաղորդելիք չունենալով, մնում եմ սրտագին ողջույններով Ձեր բարձր Արժանապատվության խոնարհ ծառա

Մուրացան[1]

29 հոկտ., 1904, Թիֆլիս

Իմ հասցեն՝ Ртищевская № 15 Мурацан

Բարձրապատիվ հայր
Գարեգին վարդապետ

Ամսույս 20 թվով գրած Ձեր պատվական նամակը—ներփակյալ հիսուն բուբլո հետ—ստացա, որի համար հայտնում եմ սրտագին շնորհակալություն։

Այդ գումարը արձանագրեցի Ձեր արժանապատվության անվամբ բացված հաշվի պահանջ, որով Ձեզ գրկված անդորրագրերի և գրքերի դիմաց ստացած եղա Ձեղանից 125 բուբլի։

Որ հաշիվ չեք ուղարկում, հոգ չէ, միայն թե ժամանակ ունեցածդ միջոցին, հաճեցեք գրկել ինձ Ձեր գտած բոլոր բաժանորդների ցուցակը, որպեսզի չարձանագրվածների մատյանի մեջ արձանագրեմ և ապագայի համար ոչինչ չմոռացվի։ Ընկալագիրներ եք խնդրած, այս երկու օրը կուղարկեմ սիրով և ընդմին կանխավ իմ ջերմագին շնորհակալությունը Ձեզ մատուցանելով։

Ընդունեցեք, սիրալիր հայր
իմ սրտագին հարգանքը, որով մնում եմ միշտ
Ձեր խոնարհ ծառա Մուրացան

25 հունվարի, 1905, Թիֆլիս

Հ. Գ. Երկրորդ հատորն հույս ունիմ շուտով ավարտել։ Գրաքննիչի կողմից մեջ բերած մի կնճիռ որոշ ժամանակ խլեց ինձանից[2]։

Ի 29 նոյ. 1906

Նորին վեհափառության Տ. Տ. Մկրտչի սրբազնագույն Կաթողիկոսի
Ամենայն Հայոց
Գրիգոր Տեր Հովհաննիսյան
Մուրացանից

Խոնարհ խնդիր

Աստվածարյալ Սուրբ Հայրապետ, ներեցեք, որ ընդհանուր վշտի և աղետների այս օրերում, երբ դրսեն ու ներսեն հասած հարվածներից Ձեր հայրական սիրտը հանհունս վիրավորված է, ես անձնական կարիքից ստիպված,

1 Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Անհատական արխիվների ֆոնդ, թղթ. № 185, վավ. № 14։

2 Նույն տեղում, թղթ. № 185, վավ. № 15։

գալիս եմ ամենախոնարհ պատկառանոք հայրապետական հովանին և դայն արդիվնավորող տնօրինությունը հայցելու։

Ձեզ, վեհափառ տեր, այնքան սիրելի է եղել հայ գրականությունը, որ անշուշտ անհայտ չի լինի Ձեզ, թե ինչպես երեսուն երկար տարիներե ի վեր աշխատած եմ անխոնջ և անձնվեր հայ գրական ասպարեզում. դրան եմ նվիրել իմ երիտասարդության և իմ ոգևորության լավագույն տարիները, իմ մտավոր կարողության ազնվագույն արդյունքը, աշխատել եմ հարստացնել հայ գրականության վիպական մասը, առանձին խնամք ունեցել մանավանդ հայոց լեզվի կատարելության վրա և այդ աշխատության մեջ ես ոչ մի նյութական վաստակ չեմ ակնկալել։ Միևնույն միջոցին ես աշխատել եմ մասնավոր հաշվապահական պաշտոնում հայթայթել իմ ընտանիքի ապրուստը և ուսում տալով իմ զավակներին հասցրել մինչև միջնակարգ դպրոցներն ավարտելը։

Այժմ բժիշկների վկայությամբ, ինչպես ցույց է տալիս այս խնդրին կցած վկայագիրը, ես բոլորովին անկարող եմ դարձել աշխատելու, մինչդեռ ինձ վրա ծանրանում է ինչպես իմ ընտանիքին ապրուստ մատակարարելու, այնպես և երեք զավակներիս ուսման տալու հոգսը։ Իմ անդրանիկ որդի Գուրգենը ավարտել է Հայդելբերգի իննդասարանյան բեալ գեմնազիոնը և ընդունվել Բերլինի կայսերական բազմարվեստյան բարձրագույն վարժարանը (պոլիտեխնիկում), որին ի հաստատություն ներկայացնելով նույն վարժարանի տված վկայագիրը, խոնարհաբար աղաչում եմ բարեհաճել կարգադրել, որ Ա. Ղուկասյանի երկու աշխարհական սաների բարձրագույն կրթություն տալու համար հատկացած թոշակներից մեկը շնորհվի հիշյալ որդուս։ Այդ երկու թոշակներն էլ այժմ ազատ են և ես հուսալով որ իմ խոնարհ խնդրի կատարումը ոչ մի արգելքի չի հանդիպի, ամենայն ակնկալությամբ սպասում եմ Ձերդ վեհափառության բարեհաճ տնօրինությանը և խորին ակնածությամբ մատչելով ի համբույր սրբասնյալ աջույդ։

Մնում եմ Վեհափառ Հորդ ամենախոնարհ
ծառա Գրիգոր Տեր Հովհաննիսյան
Մուրացան[1]

НЕСКОЛЬКО НЕОПУБЛИКОВАННЫХ ПИСЕМ МУРАЦАНА

А. А. АДАМЯН

(Резюме)

В архивном фонде Гос. Матенадарана хранится часть эпистолярного наследия видного армянского писателя Мурацана (1854—1908). Публикуемые ныне письма, адресованные различным лицам, написаны Мурацаном в 1892—1906 гг. и представляют определенный интерес для изучения творческой биографии писателя.

---

1 Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Գևորգյան ճեմարանի արխիվ. թղթ. № 56, վավ. № 14, էջ 20։